

թուաբանական ճշգութեամբ ժամ առ  
ժամ նշանակուած են: Գարձեալ Գող-  
զիոյ լերանց վրայ նորանոր անտառներ  
անկելու ջանիք, զիսաւոր հովտաց սահ-  
մանազլուխներն ճարտարութեամբ ՚ի  
գործ գրուած զգուշութեամբք, և շատ  
վտանգի մէջ եղող երկիրները պաշտ-  
պանելու համար կանցնուած թումբ-  
լով՝ գրեթէ միշտ պիտի կարենան  
պաշտպանել զգաւառն ընդդէմ այս  
հարուածներուս. ժամանակի կամ մա-  
նաւանդ գրամս խնդիր է: Քայց սա-  
կայն պէտք է համոզուիլ որ շատ գորուա-  
րին է սահման մ'որոշել, ուսկից անդին  
չկարենայ երբեք անցնիլ յրոց աճումն:

Օդաբանական ատրեւք կան՝ որք եր-  
բեմն անըմբունելի են: Ամէն մարդ գի-

տէ Հունգարիոյ մէջ լիեյսի ողովման  
նոր հանդիպոծ ձախորդութիւնները,  
Մուրսիի զժբաղդութիւնները, և մա-  
նաւանդ վերին խովիոյ մէջ ջրոց դեռ  
նոր հասուցած աւերմունքը: Նոյն իսկ  
Հունգարիոյ մէջ, ուր կարծես թէ Տիբերիս  
գետն այնշափ երկիւզալի չէ, երբեմն  
ահաւոր ողովումներ կը հանգիպին: իմ  
բնակած պանդոկիս, որ էր Մինէրվա,  
սեղանատան մէջ՝ կը ցուցընէին ինձ  
վերջին մեծ ողովման ատեն՝ ջրոց հա-  
սած բարձրութիւնը: Աւելի շարագոյն  
այն է՝ որ ողովմանէ վերջն ընդհանրա-  
պէս Հունգարիոյ մէջ շտո վտանգաւոր և  
ատրափնիկ ցաւ մը կը սկսի:

Շարունակիլ:

### ՓՈՍՓՈՐԱՓԱՅԼՈՒՄՆ ԱԴԱՄԱՆԴԻ

Հին աւանդութեանց մէջ յիշատա-  
կուած կը գտնուին շատ անգամ գո-  
հարներ, որոց մեծ յարգ կ'ընծայուէր՝  
իրենց լցոս ճառտպայթելու յատկու-  
թեան պատճառաւ: Այս յատկու-  
թիւնս բնական արդիւնք է շատ մը գո-  
հարներու, որք ընդունած լցուերնին  
սաստիկ բեկրեկմամբ կը ցուացընեն.  
Բայց ոչ այսպէս է ադամանդին փոսփո-  
րափայլումն. վասն զի ադամանդն սե-  
փական յատկութեամբ մը արեւուն լց-  
ուր որպէս թէ կը ծծէ, և զայն միտու-  
թեան մէջ կը ճառտպայթէ: Ադա-  
մանդն այս յատկութիւնը կրնայ ստա-  
նալ շիմամբ և կամ ջերմութեամբ: Բայց  
մինչեւ ցայսօր ադամանդին այս  
յատկութեան վրայ սակաւաթիւ գի-  
տողութիւնք եղել էին, զի փոդայ հա-  
մար՝ մեծաղանգուած ադամանդի կա-  
րուառութիւն կար. և մեծամեծ ադա-

մանդներն դժբախտաբար գիտնակա-  
նաց փափաքը գոհացընելու սահմա-  
նեալ չեն, այլ իբրև անդին գոհար-  
ելէնք՝ սակաւուց միտյն վերտպահեալ:  
Բայց վերջներս գոհարավաճառաց ընկե-  
րութեան մը ձեռքն հասաւ 368 ցորե-  
նահտափ ծանրութեամբ ադամանդ մը,  
ամենազեղեցիկ պայծառութեամբ, ա-  
մենակատարեալ երկրաչափական ձե-  
ւերով . . . և իր 300000 ֆրանգաց ար-  
ժէքով: Այս գոհարով՝ ադամանդին  
փոսփորափայլման նկատմամբ զանա-  
զան փորձեր կատարեցին. և ստուգուե-  
ցաւ՝ որ ժամ մը արեւու տակ կինալէն  
յետոյ կարող է գոհարն մութ տեղւոյ  
մէջ մօտ գրուած ձերմակ թուղթ մը  
ամենորոշ կերպով ցուցընելու չափ  
լուսաւորել: Նցն արդիւնքն կը տես-  
նուի, թէպէտ և նուազագոյն աստի-  
ճանաւ, երբ փոխանակ լուսոյ արեգա-  
կան վալդայի կաևարին լցուը գործ-  
ածնելք, և կամ երբ քանի մը վայրկեան  
զուտ ասուեզինով զազամանգը շփենք:

